Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.1-Մ6-2 Մասնագետ(2023-11-28)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն | Հասարակական անվտանգության ապահովման և հանցավորության դեմ պայքարի ոլորտում քաղաքականության մշակման ու մոնիթորինգի բաժին | Մասնագետ, (27-33.1-Մ6-2)

1.2 Ենթակա և հաշվետու է

Մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մասնագետներից մեկը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փ. 130:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. օժանդակում է հասարակական անվտանգության ոլորտի զարգացման ռազմավարությունների մշակման աշխատանքներին.
2. օժանդակում է ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի, այլ ռազմավարական ծրագրերի՝ հասարակական անվտանգության ոլորտին առնչվող միջոցառումների մշակման աշխատանքներին.
3. օժանդակում է ռազմավարական ծրագրերից բխող հասարակական անվտանգության ոլորտի միջոցառումների իրականացման շրջանակներում օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքներին.
4. օժանդակում է հասարակական անվտանգության ոլորտի զարգացմանն ուղղված նոր ծրագրերի և նախաձեռնությունների մշակման աշխատանքներին.
5. օժանդակում է հասարակական անվտանգության ոլորտին առնչվող կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման աշխատանքներին.
6. օժանդակում է Նախարարի կամ ոլորտը համակարգող նախարարի տեղակալի հանձնարարությամբ կառավարչական բնույթի հրամանների և ցուցումների նախագծերի նախապատրաստման աշխատանքներին:

Իրավունքները.

- համագործակցել Նախարարության մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ.
- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի և դրանց առնչվող՝ Նախարարության իրավասության շրջանակներում այլ ոլորտների խնդիրների լուծման նպատակով:

Պարտականությունները.

- ուսումնասիրել ռազմավարական պլանավորման իրականացման և ռազմավարական փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ տվյալները.
- ոստիկանությունից անհրաժեշտ տեղեկատվության և կատարված աշխատանքների վերաբերյալ իրականացված մոնիթորինգի արդյունքում հավաքագրել տեղեկատվություն հաշվետվությունների կազմման համար.
- հավաքագրել տեղեկատվություն հաստատված ռազմավարությունների կատարման արդյունքներով կազմված Բաժնի ոլորտին վերաբերող հաշվետվությունների մշակման համար.
- աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին օրենսդրությամբ սահմանված կարգով բաժնի գործառույթներին առնչվող մասով տեղեկությունների տրամադրման նպատակով:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

ԱՌՆՎԱԶՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Աշխատանքային ստաժ չի պահանջվում:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Բարեվարքություն
  - Հաշվետվությունների մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: